Կոստանդինուպոլիս։ Գասըմ Պէկն՝ որ զրկեալ էր յառաջագոյն յիշխանութենէ Երուսաղէմի՝ յաւուրս Ճէզար Փաշայի, այժմ կարգեալ քաղաքապետ Երուսաղէմի, յանկարծ եկն և եմուտ 'ի քաղաքն և նստաւ 'ի տեղի իւր՝ և կալեալ զառաջին քաղաքապետն Եահեայ Պէկ եդ 'ի դիպահոջ 'ի բերդն, որպէս հրամայեալ էր նմա կուսակալն։ Միւֆթի և Նախիպ քաղաքին յահէ նորա փախուցեալ ամրացան 'ի Սիոն. զի յառաջագոյն թշնամացեալ էին ընդ նմա՝ դիմեցին անդր և կուսակիցք նոցին, և զինեցան ընդդէմ Գասըմի. ճեղքեցաւ քաղաքն յերկուս, գործեցին ապիրատութիւն մեծ տիւ և գիշեր։ Զայն ետ Միւֆթին Ապուղոշ Օթմանին ժողովել զիւրսն և հասանել յօգնութիւն 'ի Սիոն. գրեաց և Գասըմ առ բնակիչս Յովհաննու Մնընդեան գալ 'ի Թիկունս, և ժողովեցաւ բազմութիւն մեծ 'ի քաղաքին յերկուց կողմանց։ Միւֆթին ելեալ 'ի Սիոնէ դիմեաց բազմութեամբ 'ի վերայ բերդին, հանել անտի զզօրս և նոքօք զինիլ ընդդէմ Գասըմայ, այլ ամրականք դարձուցին զզէնս իւրեանց 'ի վերայ նոցա և արարին ըզնոսա փախստական, և նոցա հասեալ 'ի դուռն քաղաքին արեւելեան՝ պատգամ յղեցին անդ 'ի բերդն տալ զբանալի դրան, զի աղխեալ էին դրունք պարսպին և վանօրէից. և իբրեւ չառին նոքա յանձն՝ խորտակեցին զփականս և բացեալ զդուռն ելին արտաքս, և վերստին յուզեցաւ աղմուկն 'ի քաղաքին, եւ Միւֆթին եկեալ իւրովքն հանդերձ ամրացաւ 'ի Սիոն, և 'ի զայրանալ բանից յերկուց կողմանց՝ բանս եդին դրել առ Կուսակալն։ Իսկ Միւֆթին առանձին միջնորդ կալաւ առ Եուսուֆ Փաշա, զՍիւլէյման Փաշա, որ նստէր յԱքքէ, բառնալ զԳասըմ յԵրուսաղէմէ, և հաստատել 'ի տեղի նորա Եահեայ։ Կարգեցան զօրականք 'ի դրունս պարսպին և վանօրէից պահել 'ի տիւէ և 'ի գիշերի. պիտոյք քաղաքին և վանօրէից պարանաւ ձգէին 'ի պարսպէն։ Եւ 'ի խառնութեանս յայսմիկ քրիստոնեայք պաշարեցան յերկիւղ մեծ. Միւֆթին յարտաքուստ և Գասըմ 'ի ներքուստ պահանջէին 'ի վանականաց ուտեստ և դրամ։ Իսկ Կուսակալն արար պատասխանի՝ զի զոր կացուցի՝ այն է քաղաքապետ, զի ոչ եմ իբրեւ զայլս, խորհրդով ձերով տնտեսել զգործս իմ. եւ